Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ
ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) «Անուշ Մաթևոսյան կրթավճար» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան և նրանց մասնաճյուղերն ընդունված **սոցիալապես անապահով, բարձր առաջադիմություն ցուցաբերած, բակալավրի առկա բաժնի առաջին կուրսեցիների** համար հայտարարում է մրցույթ:
Մրցույթին կարող են մասնակցել այն ուսանողները, ովքեր.
ա) **ընդունվել են.**
ԵՊՀ- մաթեմատիկայի և մեխանիկայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, ֆարմացիայի, կենսաբանության, միջազգային հարաբերությունների /միայն քաղաքագիտություն, հանրային կառավարում/, սոցիոլոգիայի /միայն սոցիալական աշխատանք/, փիլիսոփայության և հոգեբանության /միայն հոգեբանություն/, հայ բանասիրության, աշխարհագրություն և երկրաբանություն /միայն սերվիս / և ժուռնալիստիկայի, եվրոպական լեզուների և հաղորդակցության/ միայն թարգմանչական գործ/ ֆակուլտետներ:
ՀՊՏՀ- ֆինանսական, ինֆորմատիկայի և վիճակագրության, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետներ:
ՀԱՊՀ- տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի, էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտներ, մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտ (թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ, ռոբոտոտեխնիկա և մեխատրոնիկա, տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ կրթական ծրագրեր), կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետ:
ՀԱԱՀ- ագրոբիզնեսի և շուկայաբանության, տնտեսագիտական, անասնաբուժական և անասնաբուժական բժշկագիտության, ագրոնոմիկայի ֆակուլտետներ:
ՀՊՄՀ- հատուկ կրթության, կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ /միայն հոգեբանություն, սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժություն/:
բ) ունեցել են բարձր առաջադիմություն դպրոցում, միասնական քննությունները հանձնել են լավ կամ գերազանց գնահատականով և ընդունվել ուսուցման վճարովի համակարգ,
գ) սոցիալապես անապահով ընտանիքներից են,
դ) պարտավորվում են ուսման ավարտից հետո նվազագույնը 4 տարի ապրել և աշխատել Հայաստանի Հանրապետությունում
ե) առավելություն կտրվի միասնական քննություններից բարձր գնահատական ստացած դիմորդներին:
Վերոհիշյալ պայմաններին համապատասխանող ուսանողները պետք է քննությունների ավարտից հետո, **2022թ. հուլիսի 20-ից օգոստոսի 5-ը** ներառյալ ք. Երևան, Մովսես Խորենացի 22 հասցեում գտնվող ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ ներկայացնեն, կամ էլ. փոստով edik.karapetyan@far.am; mane.khachatryan@far.am; ուղարկեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում (ձևը ստանալու համար կարող եք դիմել վերոհիշիալ հասցեներով կամ ՀՕՖ-ի ֆեյսբուքյան էջին **facebook/ Farusa (Fund for Armenian relief)**
- անձնագրի պատճեն, 1 լուսանկար (3x4 սմ չափսի),
- միջնակարգ կրթության վկայականի պատճեն,
- միասնական քննությանների գնահատականի մասին տեղեկանք,
- ԲՈՒՀ ընդունվելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԳԹԿ-ի կողմից հաստատված ցուցակի պատճեն կամ ԲՈՒՀ-ի տեղեկանքը:
- ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանք (առկայության դեպքում),
- տեղեկանք ծնողների աշխատավայրից՝ նրանց աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ, եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային գրքույկի պատճենը պարզաբանումով ներկա զբաղվածության կամ չաշխատելու պատճառի մասին:
- հակիրճ ինքնակենսագրություն՝ նշելով, թե ինչու եք դիմել տվյալ ծրագրին:

Թերի փաստաթղթերը չեն դիտարկվի:
Շահառուների ընտրությունը տեղի է ունենալու 2 փուլով.

1. Ներկայացված փաստաթղթերի դիտարկում
2. Ուսանողների տուն կատարած այցերի արդյունքների ամփոփում
3. Անհրաժեշտության դեպքում հարցազրույցի անցկացում

Ծրագրում ուսանողի ընդգրկման որոշումը կայացնելու է ՀՕՖ-ի կրթական ծրագրերի հանձնաժողովը **օգոստոսի 29-ից 31-ը:** Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 060526660 հեռախոսահամարով:

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ

ՀՕՖ-ի «Անուշ Մաթևոսյան կրթավճար» ծրագրի
2022-2023 ուս. տարվա մրցույթին մասնակցելու
Դիմում

Դիմորդի ազգանուն, անուն, հայրանունը _____
/ինչպես անձնագրում/

Անձնագրի սերիան և համարը _____ տրված_____ ում կողմից

Ծննդյան թվականը _____ ծննդավայրը _____
երկիր/քաղաք/գյուղ

Քաղաքացիությունը_____

Գրանցման հասցեն՝ _____
երկիր/մարզ քաղաք/գյուղ փոստային ինդեքս փողոց տուն/ բն.

Բնակության հասցեն՝ _____
երկիր/մարզ քաղաք/գյուղ փոստային ինդեքս փողոց տուն/ բն.

Հեռ. (տան)՝ _____
մարզի կոդ

Հեռ. (բջջային)՝ _____

Դիմորդի ընտրած ԲՈՒՀ-ը /անվանումը/ _____
Ֆակուլտետը, բաժինը_____
Ուսման վարձի մեկ տարվա գումարը _____ ՀՀ դրամ

Ատեստատի միջին գնահատականը/ հաշվել քննությունների միջին թվաբանականը/_____
Միասնական քննությունների գնահատականները՝ _____
ԲՈՒՀ-ի քննությունների գնահատականները _____
Ընդհ. / ինչ միավորով եք ընդունվել բուհ/ _____

Ծանոթացա ՀՕՖ-ի մրցութային կարգին և համաձայն եմ մրցույթի պայմաններին: Խնդրում եմ ինձ ընդգրկել 2022-2023 ուս. տ. «Անուշ Մաթևոսյան կրթավճար» ծրագրի մրցույթի մասնակիցների ցանկում:
Դիմումին կից ներկայացնում եմ՝

- անձնագրի պատճեն,
- 1 լուսանկար (3x4 սմ չափսի),
- միջնակարգ կրթության վկայականի պատճեն,
- միասնական և բուհում հանձնած քննությունների գնահատականների մասին տեղեկանք,
- ԲՈՒՀ ընդունվելու վերաբերյալ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԳԹԿ-ի կողմից հաստատված ցուցակի պատճեն կամ ԲՈՒՀ-ի տեղեկանքը:
- ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանք /առկայության դեպքում/,
- տեղեկանք ծնողների աշխատավայրից նրանց աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ: Եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային գրքույկի պատճենը չաշխատելու պատճառի պարզաբանմամբ,
- Հակիրճ ինքնակենսագրություն՝ նշելով, թե ինչու եք դիմել տվյալ ծրագրին:

Սույն ստորագրությունը վկայում է, որ վերոհիշյալ ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը ճշգրիտ են:
Հիշեցում՝ փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:
Թերի փաթեթները չեն դիտարկվի:

Դիմորդի ստորագրությունը _____ Ամսաթիվ _____